ՀՀԿԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

19 սեպտեմբեր, 2025 թվականի № 73-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի № 64-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 17-ին ներկայացված թիվ N Ռ/25–01-098 գրությունը և հաշվի առնելով լսողական ծրագրերի հաղորդացանցերի պարբերական բարելավման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2025 թվականի օգոստոսի 28-ի № 64-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Մշակույթ» (առցանց) լսողական ծրագրի՝ 2025 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

19 սեպտեմբեր, 2025 թվականի

ք. Երևան